



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**  
**ՄԵԾԱՍՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հասցե : , ՀՀ, ՄԵԾԱՍՈՐ  
 560

Հեռախոս: 34441  
 Ֆաքս: 34441

Ելից  
 27 դեկտեմբերի 2013թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝  
 ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՍԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ի լրումն Մեծամորի քաղաքապետի թիվ 545 գրության Ձեզ եմ ներկայացնում  
 Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 07  
 նիստի թիվ 28-Ն որոշման քաղվածքը :

Առդիր՝ 56 թերթ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅԱՆ  
 Մտնց թիվ՝ 21-Բ/12969-13  
 28.12.2013

## 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 02 նիստի «Մեծամոր քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 12-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը:

Հաշվի առնելով բնակլիմայական անբարենպաստ պայմանները, կապված գյուղ մթերքների արտադրության և տեղում իրացնելու, բնակչության կողմից շինարարություն չկատարելու փաստը և բնակչության որոշ մասի բացակայությունը, համայնքի վարչական բյուջեի եկամտային մասից պակասեցնել 4250,0 հազար դրամ՝ ըստ հետևյալ եկամտատեսակների.

1. Շինարարության թույլտվության համար եկամտատեսակից՝ 380,0 հազար դրամ,
2. Գյուղ մթերքների բացօթյա վաճառքից՝ 400,0 հազար դրամ,
3. Տեղական վճարներից՝ այդ թվում աղբահանությունից՝ 2980,0 հազար դրամ,
4. Ինքնական շինարարության և օրինականացման վճարներից՝ 490,0 հազար դրամ:

Վարչական բյուջեի ծախսային մասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի բաժին 01, խումբ 1, դաս 1, 4111 հոդվածից պակասեցնել 1900,0 հազար դրամ, 4215 հոդվածից՝ 100,0 հազար դրամ, 4233 հոդվածից՝ 250,0 հազար դրամ, 4264 հոդվածից՝ 550,0 հազար դրամ, «Առողջապահություն» ծրագրի բաժին 07, խումբ 3, դաս 1, 4729 հոդվածից պակասեցնել 530,0 հազար դրամ, «Սոցիալական պաշտպանություն» ծրագրի բաժին 10, խումբ 7, դաս 1, 4729 հոդվածից պակասացնել 2140,0 հազար դրամ, «Կրթություն» ծրագրի բաժին 09, խումբ 1, դաս 1, «Թիվ 1 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածից պակասեցնել 260,0 հազար դրամ, «Թիվ 2 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածից պակասեցնել 436,0 հազար դրամ, «Թիվ 3 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածից պակասեցնել 984,0 հազար դրամ և ավելացնել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի բաժին 01, խումբ 1, դաս 1, 4214 հոդվածին 100,0 հազար դրամ, «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ծրագրի բաժին 06, խումբ 1, դաս 1, 4511 հոդվածին 2800,0 հազար դրամ:



ԻՍԿԱՆՔԻ ԲԵՏ ՏԻՇՏ Է  
ՄԵՏԱՄՈՐ ԶՄՈՒ ԿՍԿԵՂՈՒՄ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ